ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ
ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄԸ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ

Հեղինակներ՝ Տիրուհի Նազարեթյան, Աննա Բարիկյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անփոփ տեղեկություն խորհրդատվական կարծիքի վերաբերյալ 3

Ներածություն 4

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ընդհանուր իրավիճակը և օրենսդրական հիմքերը ՀՀ-ում 6

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հրահանգներ և ՀՀ օրենսդրություն 9

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն նյութը հանդիսանում է խորհրդատվական փորձագիտական կարծիք, որը անդրադառնում է ՀՀ–ում աշխատող անձանց աշխատանքային իրավունքներին և, մասնավորապես, առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման խնդիրներին, դրանց համապատասխանությանը ՀԸԳ համաձայնագրի դրույթներին, ԱՄԿ կոնվենցիաներին: Կարծիքը ներառում է նաև առաջարկություններ, օրենսդրական դաշտի լավարկման և պրակտիկայում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման համար:

Կարծիքի կազմման ընթացքում կիրառվել է փաստաթղթային ուսումնասիրություն որակական մեթոդաբանություն:

Օգտագործված հապավումներ

ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱԱՏՄ	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԸԳ	Համապարփակ և ընդլայնված գործընկերություն
ՀԸԳՄ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատողների առողջության պահպանումը և անվտանգության ապահովումն ուղղված է աշխատավայրում աշխատողների համար առողջ և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովմանը: Աշխատողներն իրենց կյանքի մեծ մասն անցկացնում են աշխատավայրում, քանի որ այնտեղ լինում են օրական առնվազն ութ ժամ: Հետևաբար, աշխատանքային միջավայրը պետք է լինի առողջ և անվտանգ: Գործատուների կողմից առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների պահպանմամբ և ապահովմամբ բարձացվում է աշխատողների աշխատունակությունը, երաշխավորվում է աշխատանքի անխափան գործունեությունը, ինչպես նաև բարձրացվում է արտադրողականությունը:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ստանդարտների կիրարկման արդյունքում աշխատավայրում նվազեցվում են վտանգները և վերացվում:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է գործատուների և աշխատողների, աշխատողների ներկայացուցիչների համագործակցությունը, քանի որ գործատուները պարտավոր են ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ, իսկ աշխատողները պարտավոր են բարեխղճորեն պահպանել դրանք: Ամբողջ աշխարհում շատ աշխատողներ իրենց աշխատավայրերում ամեն օր բախվում են բազմաթիվ վտանգների: Անառողջ կամ անապահով աշխատանքային պայմանները չեն սահմանափակվում միայն փակ աշխատավայրերով: Գյուղատնտեսության կամ հանքարդյունաբերության ոլորտի աշխատողները, ովքեր աշխատում են «բացօթյա», հանդիպում են նույնպես բազմաթիվ վտանգների, որոնք կարող են վնասել նրանց առողջությանը և անվտանգությանը: Վատ աշխատանքային պայմանները կարող են վնասել ոչ միայն աշխատողներին, այլ նաև այդ վայրում բնակվող բնակչությանը:

Կարևորելով աշխատողների առողջության պահպանումը և անվտանգության ապահովումն՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունն իր ուշադրության ներքո է (այսուհետ՝ ԱՄԿ) պահում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման խնդիրը: 1919 թվականին, երբ հիմնադրվեց ԱՄԿ-ն, աշխատանքային գործունեությունից ծագող հիվանդություններից և խեղումներից աշխատողների պաշտպանությունը ներառվեց

ԱՄԿ-ի Կանոնադրության Նախաբանում[1]: 2022 թվականին ԱՄԿ-ի Աշխատանքի միջազգային կոնֆերանսի 110-րդ նստաշրջանում «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155, «Աշխատանքի անվտանգության և առողջության խթանման շրջանակը» ԱՄԿ թիվ 187 կոնվենցիաները ճանաչվել են հիմնարար:[2]

Համաձայն Եվրոպական միության գործունեության պայմանագրի 151-րդ հոդվածի՝ Միությունը և անդամ պետություններն իրենց նպատակներում պետք է սահմանեն զբաղվածության խթանումը, կենսապայմանների և աշխատանքային պայմանների բարելավումը, պատշաճ սոցիալական պաշտպանվածությունը, գործատուի և աշխատողների երկխոսությունը, մարդկային ռեսուրսների զարգացումը՝ նկատի ունենալով 1961 թվականի հոկտեմբերի 18-ին Թուրինում ստորագրված Եվրոպական սոցիալական խարտիան և Աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների 1989 թվականի Համայնքային խարտիան, իսկ ըստ 153-րդ հոդվածի՝ սահմանվում է, որ այս նպատակներին հասնելու համար ԵՄ-ն աջակցում է անդամ պետությունների գործունեությանը տարբեր ոլորտներում, որոնցից առաջինը հանդիսանում է աշխատանքային միջավայրի բարելավումը՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նպատակով:[3]

[1] https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:62:0::NO:62:P62_LIST_ENTRIE_ID:2453907:NO

[2] https://www.ilo.org/global/standards/introduction-to-international-labour-standards/conventions-and-recommendations/lang--en/index.htm#:~:text=Fundamental%20Conventions&text=At%20the%20110th%20Session%20of,principles%20and%20rights%20at%20work%20.

[3] https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:12012E/TXT:en:PDF

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ընդհանուր իրավիճակը և օրենսդրական հիմքերը ՀՀ-ում

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ և կարգավորվում է ներպետական օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:[4]

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու օրենսդրական հիմքերն ամրագրված են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, որը հանդիսանում է առանցքային ոլորտային իրավական փաստաթուղթ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը սահմանվում է իբրև աշխատանքային օրենսդրության սկզբունք, իսկ 23-րդ Գլխում (հոդվածներ 242-262) ամրագրված են աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերող մի շարք դրույթներ:

Աշխատանքային անվտանգության և առողջության միջազգային ստանդարտները սահմանվում են նաև Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) մի շարք կոնվենցիաներով և ՀԸԳ համաձայնագրի դրույթներով:

Ազգային քաղաքականության մշակումն ու ընդունումը, իբրև պահանջ, նաև դրված է «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 կոնվենցիայի հիմքում Պետությունները պետք է ընդունեն աշխատանքային միջավայրում վտանգների նվազեցման միջոցով վթարների և առողջական վնասների կանխարգելմանն ուղղված ազգային քաղաքականության փաստաթուղթ:

Հայաստանում առկա չէ աշխատանքային իրավունքների կարգավորմանը վերաբերող ազգային քաղաքականություն, որի մաս կկազմեր նաև անվտանգ և հիգիենիկ աշխատանքային պայմաններ ապահովելու վերաբերյալ պետական ռազմավարությունը և գործողությունների ծրագիր:

[4] https://www.president.am/hy/constitution-2015/

Սահմանադրությամբ երաշխավորված՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման հանդեպ պետական վերահսկողական գործառույթը վերապահված է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին (այսուհետ՝ ԱԱՏՄ)։

Իր կանոնադրական շրջանակներում ԱԱՏՄ-ն ունի վերահսկողական գործառույթներ աշխատանքային իրավունքների բավականին նեղ շրջանակի հանդեպ։ ԱԱՏՄ կիրառում է պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառներում։

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման հանդեպ վերահսկողությունը հանդիսանում է ԱԱՏՄ-ի կանոնադրական առանցքային լիազորությունը։ Սակայն առկա են մի շարք օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են տվյալ իրավունքի իրացմանը։

Հարկ է նշել, որ 2013 թ.-ի օրենսդրական փոփոխությունների արդյունքում տեսչական մարմնի լիազորություններն ու գործառույթները զգալիորեն կրճատվեցին, վերացվեցին տեսչական մարմնին մինչ այդ տրված արտադատական լիազորությունները, որոնք կարևոր դեր էին խաղում աշխատողի խախտված իրավունքների վերականգնման գործում։

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման համար, ԱԱՏՄ գործառույթների ամբողջականության վերականգնումից զատ, անհրաժեշտ է նաև տվյալ իրավունքի իրացման լիարժեք նորմատիվային հիմքի ապահովումը։

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուն պարտավոր է ընդունել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր։ Թեպետ առկա են աշխատանքային պայմաններին վերաբերող՝ Առողջապահության նախարարի մի շարք հրամաններ, սակայն բացակայում է նորմատիվային կարգավորումներ պարունակող ընդհանուր փաստաթուղթ, որում ընդգրկուն կերպով սահմանված և նկարագրված կլինեն առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների չափանիշները, որոնցով նաև կուղղորդվեր գործատուն։

Այս առումով ԱԱՏՄ-ի գործառույթների այսօրվա սահմանումը հակասում է նաև «Արդյունաբերությունում և առևտրում տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիային, որը սահմանում է, որ տեսուչների թիվը պետք է լինի բավարար, ինչպես նաև նրանք պետք է

իրավունք ունենան ցանկացած պահի մուտք գործել կազմակերպություն, առանց գործատուին նախապես տեղեկացնելու կամ ծանուցելու: Մինչդեռ ստուգումները իրականացվում են ընդհանուր ընթացակարգով՝ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համապատասխան, այսինքն նախորոք ծանուցելով: Անհրաժեշտ է բացառություն սահմանել և համապատասխանեցնել կոնվենցիային:

Այսպիսով, Հայաստանում առկա է առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունքի սահմանադրական երաշխիքը, սակայն թերի են տվյալ իրավունքի ապահովման օրենսդրաիրավական հիմքերը, բացակայում են տվյալ իրավունքի իրացման հանդեպ պետության վերահսկողության, աշխատողի խախտված իրավունքների վերականգման մեխանիզմները:

Այս համատեքստում անհրաժեշտ է նաև դիտարկել արհմիությունների դերը, ընդհանրապես ԱՄԿ եռակողմ մեխանիզմը հասարակական և պետական հսկողության և վերահսկողության մասով: Տեղայնացված մեխանիզմ ներդնելու դեպքում արհմիությունները կարող են շատ արդյունավետ իրականացնել հասարակական վերահսկողություն, եթե տրվի ուղղակի լիազորություն օրենքով: Այս դեպքում արհմիություն-պետական մարմին-գործատու համագործակցության ձևաչափը կարող է զգալի բարելավել իրավիճակը:

Աշխատանքային օրենսգրքի վերջին փոփոխություններն ուղղված են առողջ և անվտանգ պայմանների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը և արտադատական մարմինների ստեղծմանը: Սակայն այս փոփոխությունները կարելի է անվանել ավելի շատ նախադրյալների ստեղծում: Իհարկե այս փոփոխությունները անհրաժեշտ է իրականացնել համաչափ աշխատաշուկայի բարելավմանը և լավարկմանն ուղղված ռազմավարությունների շրջանակում:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հրահանգներ և ՀՀ օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև 2017 թվականի նոյեմբերին կնքվել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)։ ՀԸԳՀ-ի հիմնական մասերի կիրառումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 1-ից, իսկ ամբողջությամբ՝ 2021 թվականի մարտի 1-ից[5]։

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է մոտարկել ազգային օրենսդրությունը Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ ՀԸԳՀ-ի հավելվածների դրույթներին համապատասխան, որից VII-րդ հավելվածը վերաբերում է աշխատանքային իրավունքին, աշխատանքի առողջության պահպանմանը և և անվտանգության ապահովմանը։

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի սեպտեմբերի 12-ին ընդունված ՀՀ օրենքով սահմանվել է «մոտարկում» հասկացությունը, ինչպես նաև լրացվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որը վերաբերում է ՀԸԳՀ-ով նախատեսված հրահանգների մոտարկման համար նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությանը։ Այս օրենքի անցումային դրույթների համաձայն՝ օրենքը ուժի մեջ է մտնելու միայն 2024 թվականի հունվարի 6-ին[6]։

ՀԸԳՀ-ի «Համագործակցության վերաբերյալ այլ քաղաքականություններ» V մասի «Զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ» 15-րդ գլխի VII հավելվածում ներառված «Աշխատավայրում առողջությանը և անվտանգությանը» վերաբերող հրահանգների մոտարկման ժամկետ Գործընկերության խորհրդի կողմից դեռևս որոշված չէ։ Անհրաժեշտ է որոշել մոտարկման ժամկետներ և ներառել ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզում, որը հաստատվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի 1 հունիսի № 666-Լ որոշմամբ ։

[5] https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf
[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183520

«Աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12–ի 89/391/ԵՏՀ Հրահանգով սահմանվում են ընդհանուր սկզբունքներ, որոնք ուղղված են աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովմանն ու առողջության պահպանմանը, մասնագիտական հիվանդությունների ռիսկերի կանխմանը: Այս Հրահանգով սահմանված «աշխատող» եզրույթն իր մեջ ներառում է ցանկացած անձ, ով աշխատանքի է ընդունվում գործատուի կողմից, ինչպես նաև փորձնակները և ուսուցանվողները: Հրահանգի դրույթերը չեն տարածվում զինված ուժերի, ոստիկանության, քաղաքացիական պաշտպանության հատուկ ծառայություններում ծառայողների վրա՝ ելնելով նրանց յուրահատուկ հատկանիշներից: Հրահանգի 3-րդ «Սահմանումները» հոդվածով սահմանվել է նաև, որ սույն Հրահանգի իմաստով «աշխատողի ներկայացուցիչ» եզրույթը, ըստ որի՝ «…ով, հատուկ պատասխանատվություն է կրում աշխատողների անվտանգության և առողջության համար՝ ցանկացած անձ, ով ընտրվել կամ նշանակվել է ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան՝ աշխատողներին ներկայացնելու նպատակով, երբ խնդիրներ են ծագում աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցում»: [7]

Սույն Հրահանգով սահմանվում է գործատուի կողմից աշխատավայրում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար միջոցառումներ ձեռնարկելը, ինչպես նաև աշխատողների կողմից առողջության պահպանման և անվտանգության ապահովման պայմանների վերաբերյալ նորմերը և կանոնները: Գործատուն այդ միջոցառումները պետք է ձեռնարկի՝ ելնելով դժբախտ դեպքերի կանխարգելման և կանխման սկզբունքներից: Կանխարգելման կամ կանխման միջոցառում կարող է լինել օրինակ աշխատողների ուսուցումը կամ վերապատրաստումը, աշխատավայրում առողջության պահպանման և անվտանգության ապահովման քաղաքականության մշակումը:

Հրահանգով սահմանվում է գործատուի՝ առաջին օգնության, հրդեհի մարման և աշխատողների տարհանման, լուրջ ու սպառնացող վտանգների դեպքում, ինչպես նաև

[7] https://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_89_391_am.pdf

աշխատողին և աշխատողի ներկայացուցչին ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկացնելու պատականությունները: Համաձայն սույն Հրահանգի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործատուները պետք է խորհրդակցեն աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ և թույլ տան, որ նրանք մասնակցեն աշխատավայրում անվտանգության և առողջության պահպանման հարցերի վերաբերյալ քննարկումներին»:

Սույն Հրահանգի և ՀՀ աշխատանքային օրենսդրության ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը պարունակում է Հրահանգով սահմանված դրույթներ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 217-րդ հոդվածով սահմանված է, որ գործատուն պարտավոր է աշխատողի համար ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ: Աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում գործատուն պարտավոր է աշխատողին ծանոթացնել աշխատանքի պաշտպանության, հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին, որին զուգահեռ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել է նաև աշխատողի հետևյալ պարտականությունը. «…պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, արտակարգ դրության կամ կարանտինի ընթացքում գործող՝ Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները,…»:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատանքի ժամանակ գործատուն պետք է ապահովի յուրաքանչյուր աշխատողի համար անվտանգ և առողջության համար անվնաս ու աշխատանքի նորմալ պայմաններ, ինչպես նաև ապահովի աշխատավայրի կահավորման պահանջները: Գործատուն իրավունք ունի հրավիրել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հատուկ ծառայություն՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման իր պարտականությունները կատարելու համար:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված է, որ գործատուն պարտավոր աշխատողներին տեղեկացնել և խորհրդակցել նրանց անվտանգության ապահովման և առողջության պահպանման հետ կապված միջոցառումների կազմակերպման և իրականացման և վերահսկման վերաբերյալ: Այդ քննարկումներին կարող է մասնակից

դարձնել նաև աշխատողների ներկայացուցիչներին, ինչպես նաև գործատուն իրավունք ունի ստեղծել իր մոտ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով աշխատողների անվտանգության ապահովման և առողջության հարցերով հանձնաժողով: Ցավոք, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ բոլոր կազմակերպություններում է ստեղծվում այդպիսի հանձնաժողովներ, ինչպես նաև արհեստակցական կազմակերպություններ, որոնք կարող են աջակցել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերում: Մեկ այլ խնդիր է, որ ՀՀ-ում համապատասխան մասնագետներ շատ քիչ են, և պետությունը պետք է խրախուսի երիտասարդներին ընտրել այդ մասնագիտությունը:

Առաջարկվում է նաև, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին տալ հսկողություն իրականացնելու լիազորություն, ինչպես նաև ընդունել աշխատանքի անվտանգության ապահովության և առողջության պահպանության հիմնական նորմերի և կանոնների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտ, որտեղ ներառված կլինեն հիմնական միջոցառումները ,այդ թվում՝ Խորհրդի 1989 թվականի հունիսի 12–ի 89/391/ԵՏՀ Հրահանգով սահմանվածները, որոնք տեղ չեն գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2022 թվականին շրջանառվել է «Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, սակայն այդպես էլ չի ընդունվել:

Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 30–ի Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով առաջին անհատական հրահանգ) (89/654/ԵՏՀ) Հրահանգով սահմանվում է աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները[8]: Սույն Հրահանգի իմաստով «աշխատավայր» նշանակում է այնպիսի վայր, որը նախատեսված է կազմակերպության և (կամ) հաստատության աշխատակայանների տեղակայման համար և (կամ) կազմակերպության ու (կամ) հաստատության տարածքում ցանկացած այլ վայր, որտեղ աշխատողը կարող է մուտք գործել իր աշխատանքի ընթացքում: Հրահանգով տարանջատվում են առաջին անգամ

[8] https://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_89_654_am.pdf

օգտագործվող աշխատավայրերը և արդեն օգտագործվող աշխատավայրերը ու յուրաքանչյուրի համար սահմանվել է անվտանգության ապահովման և առողջության պահպանման նվազագույն պահանջներ:

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը հասանելի չէ աշխատողների և գործատուների համար, քանի որ պահանջները սահմանվում են տարբեր պետական մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով՝ շինարարական նորմերով, հիգենիկ նորմերով:

Առաջարկվում է մշակել աշխատավայրերի նկատմամբ ներկայացվող անվտանգության ապահովման և առողջության պահպանման նվազագույն պահանջները հաստատելու մասին առանձին նորմատիվ իրավական ակտ, որը տեղադրված կլինի ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կայքում: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգն իր հերթին հնարավորություն կտա գտնել այդ փաստաթղթին կապող շինարարական, հիգիենիկ նորմերը:

Խորհրդի 1992 թվականի հունիսի 24–ի 92/57/ԵՏՀ Ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների իրականացման մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով ութերորդ անհատական հրահանգ) Հրահանգով սահմանվում է ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում անվտանգությանը և առողջությանը ներկայացվող նվազագույն պահանջները[9]: Սույն Հրահանգի իմաստով շինարարական հարթակ նշանակում է այն հարթակը, որտեղ կատարվում են շինարարկական աշխատանքներ կամ քաղաքացիական կառույցների շինարարություն: Համաձայն 3-րդ հոդվածի՝ եթե շինարարական հարթակում ներկա են մեկից ավելի շինարարաներ, պետք է նշանակվի անվտանգության ու առողջության ապահովման հարցերով մեկ կամ ավելի համակարգողներ: Պատվիրատուն կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձը պետք է ապահովի, որ նախքան շինարարական հարթակի տեղադրումը կազմված լինի անվտանգության ու առողջության ապահովման ծրագիր: Հրահանգի 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանվում է նաև ծրագրի նախապատրաստական և իրականացման

[9] https://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_92_57_am.pdf

փուլերում համակարգողների պարտականությունները: Հրահանգում հստակ նշվում է, եթե նույնիսկ պատվիրատուի կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձի կողմից նշանակվել է համակարգող , դա չի նշանակում, որ նրանք ազատված են իրենց պարտականություններից: Այս Հրահանգը կարևորվում է նրանով, որ նույն Հրահանգի 4-րդ հավելվածը ամբողջությամբ վերաբերում է շինարարական հարթակներում անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ նվազագույն պայմաններին: Այս Հրահանգին ՀՀ օրենսդրությունը մոտարկման արդյունքում ՀՀ –ում շինարարական հրապարակներում կաշխատեն նաև անվտանգության ու առողջության ապահովման հարցերով մեկ կամ ավելի համակարգողներ, որոնց ներկայությունը հնարավորություն կտա խուսափել դժբախտ դեպքերից:

Անհրաժեշտ է, հիմք ընդունելով Հրահանգի վերը նշված հավելվածը, մշակել նվազագույն պահանջների մասին նորմատիվ իրավական ակտ, որ աշխատանքային հարաբերությունների կողմերը կարողանան հստակ իմանալ իրենց իրավունքները և պարտականությունները, քանի որ ՀՀ-ում տեսչական մարմինները չունեն հսկողություն իրականացնելու լիազորություն, և գործատուները պատշաճ չեն ապահովում նորմատիվ իրավական ակտերով նշված պահանջները:

Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30–ի Աշխատավայրում աշխատողների կողմից անհատական պաշտպանության միջոցների օգտագործման համար առողջության և անվտանգության վերաբերյալ նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածում նշված երրորդ առանձին հրահանգ) (89/656/ԵՏՀ) Հրահանգի համաձայն՝ աշխատավայրում անվտանգությանը և առողջությանը վնասող վտանգներից պաշտպանելու նպատակով աշխատողի կողմից կրվող կամ օգտագործվող պաշտպանության միջոցները համարվում են անհատական պաշտպանության միջոցներ:[10]

Անհրաժեշտ է նշել, որ աշխատողի անհատական պաշտպանության միջոցներն օգտագործվում են միայն այն դեպքում, երբ կոլեկտիվ պաշտպանության միջոցներով հնարավոր չէ խուսափել կամ սահմանափակել վտանգների ծագման ռիսկերը:

Հրահանգի 2-րդ հոդվածը սահմանում է այն միջոցները, որոնք սույն հրահանգի իմաստով չեն կարող դիտարկվել անհատական պաշտպանության միջոցներ, օրինակ՝ սովորական աշխատանքային հագուստը կամ համազգեստը, որը նախատեսված չէ

[10] https://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_89_656_am.pdf

աշխատողներին վտանգներից պաշտպանելու համար, անհատական պաշտպանության միջոցները, որոնք կրում կամ օգտագործում են ռազմական, ոստիկանական և պետական մյուս գործակալությունները և այլն։ Անհատական միջոցները պետք է համապատասխանեն աշխատողի առողջության և անվտանգությանն ուղղված վտանգների ծագման ռիսկերին, աշխատավայրի պայմաններին, ինչպես նաև հարմար լինեն աշխատողի համար։

Հրահանգով հստակ սահմանվում է, որ աշխատողի կողմից մեկից ավելի անհատական պաշտպանության միջոցներ կրելու դեպքում պետք է այնպես արվի, որ այդ միջոցները չխանգարեն միմյանց։ Անհատական պաշտպանության միջոցները անհատական և անձնական են, սակայն լինում են դեպքեր, երբ անհատական պաշտպանության միջոցները կարող են օգտագործվել մեկից ավելի աշխատողների կողմից։ Այդ դեպքում համաձայն Հրահանգի՝ պետք է ձեռնարկվի համապատասխան միջոցառումներ՝ հիգիենան պահպանելու նպատակով։ Հրահանգում նշվում է, որ գործատուն պետք է տեղեկացնի աշխատողներին անհատական պաշտպանության միջոցների կրման և օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ և կազմակերպի դասընթացներ նրանց համար։ Սույն Հրահանգն իր 3 հավելվածով սահմանում է անհատական պաշտպանության միջոցների օգտագործման համար ռիսկերի հետազոտման աղյուսակի նմուշօրինակը,անհատական պաշտպանության միջոցների ոչ սպառիչ ցանկ–ուղեցույցը, անհատական պաշտպանության միջոցների տրամադրում պահանջող գործողությունների և գործունեության ոլորտների ոչ սպառիչ ցանկ–ուղեցույցը։ Հրահանգի 2-րդ և 3-րդ հավելվածները կարող են մեծ նշանակություն ունենալ նոր նորմատիվ իրավական ակտերի մշակելու, գործող նորմատիվ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու համար։

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվում է, որ աշխատողները պետք է ապահովված լինեն անհատական պաշտպանության միջոցներով և կարող են դադարեցնել իրենց աշխատանքը, եթե գործատուի կողմից ապահովված չէ թե՛ կոլեկտիվ պաշտպանության, թե՛ անհատական պաշտպանության միջոցները։ Անհրաժեշտ է նշել, որ Օրենսգիրքը հստակ սահմանում է, որ վերը նշված միջոցները պետք է աշխատողներին տրամադրվեն գործատուի միջոցներով՝ համաձայն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի և աշխատավայրում կատարված անվտանգության ապահովման և առողջության

պահպանության իրավիճակի գնահատման: Ինչպես Հրահանգում, այնպես էլ Օրենսգրքում նշվում է, որ անհատական պաշտպանության միջոցները պետք է հարմարեցված լինեն աշխատանքի համար, հարմարավետ լինի կրման և օգտագործման համար՝ չստեղծելով լրացուցիչ վտանգների ծագման ռիսկեր:

Մինչդեռ, ՀՀ օրենսդրությունում Հրահանգով նախատեսված անհատական պաշտպանության սպառիչ ցանկը սահմանված չէ: Ամփոփելով՝առաջարկվում է վերը նշված Հրահանգի դրույթներին մոտարկելու համար մշակել աշխատողների կողմից անհատական պաշտպանության միջոցների օգտագործման համար առողջության և անվտանգության վերաբերյալ նվազագույն պահանջների մասին նորմատիվ իրավական ակտեր՝ սահմանելով անհատական պաշտպանության միջոցների ցանկը և այդ միջոցների օգտագործման ոլորտները: Առաջարկվում է նաև վերանայել վերը նշված նորմատիվ իրավական ակտերը:

Խորհրդի 1992 թվականի հունիսի 24-ի 92/58/ԵՏՀ Աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածում նշված իններորդ առանձին հրահանգ) հրահանգով սահմանվում է աշխատավայրի անվտանգության և առողջությանը վերաբերող ցուցանակների տեղադրման գործատուի պարտականությունը: Ցուցանակների տեղադրմամբ հնարավորություն է տրվում խուսափել վտանգերից կամ նվազեցնել հետևանքները, քանի որ աշխատավայրում աշխատողները և այլ անձինք անմիջապես ստանում են համապատասխան տեղեկատվություն[11]:

«ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26 օգոստոսի 2022 թվականի N 21-Ն հրամանով հաստատվել է ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը՝ համաձայն այդ հրամանի հավելվածի[12]: Հավելվածի 1-ին գլխի 1-ին կետում նշվում է, որ այդ հրամանով սահմանված նորմերը տարածվում են «նոր

[11] https://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Direct/Social/DIR_92_58_am.pdf
[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168124

շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կապիտալ վերանորոգման (այսուհետ՝ շինարարական արտադրություն), շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների արտադրության վրա՝ անկախ այդ աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների սեփականության ձևից և գերատեսչական պատկանելիությունից»: Սույն Հավելվածի 9-րդ գլխով սահմանվում է ազգանշանային գույները և անվտանգության նշանները շինարարություններում, որտեղ ներառված են Հրահանգի դրույթները:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ոչ միայն դուրս են մնում մյուս ոլորտները, այլ նաև հին շինությունները: Առաջարկվում է մշակել և ընդունել անվտանգության ցուցանակների վերաբերյալ առանձին նորմատիվ իրավական ակտ, որը կտարածվի բոլոր ոլորտների համար, այնուհետև՝ ըստ ոլորտների: Ոլորտային նորմատիվ իրավական ակտի բացակայության դեպքում կկարգավորվի այդ հարաբերությունները հաստատված նվազագույն պահանջներով:

ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոնի կայքէջի ԵՄ և ԵՀ իրավական ակտերի բաժնի հրահանգներ ենթաբաժնում աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ 16 հրահանգների թարգմանությունները տեղադրված չեն:

Առաջարկվում է այդ հրահանգների թարգմանությունները հասանելի դարձնել հանրությանը:

Ամփոփելով՝ վերոգրյալը ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

1. Սահմանել Հրահանգների մոտարկման ժամկետներ
2. Վավերացնել ԱՄԿ թիվ 155,187 հիմնարար կոնվենցիաները
3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունները համապատասխանեցնել ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին
4. Մշակել և ընդունել աշխատանքի անվտանգության ապահովության և առողջության պահպանության հիմնական նորմերի և կանոնների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտ
5. Մշակել աշխատավայրերի նկատմամբ ներկայացվող անվտանգության ապահովման և առողջության պահպանման նվազագույն պահանջների, աշխատողների կողմից անհատական պաշտպանության միջոցների օգտագործման

համար առողջության և անվտանգության վերաբերյալ նվազագույն պահանջների, անվտանգության ցուցանակների վերաբերյալ առանձին նորմատիվ իրավական ակտեր

6. Սահմանել անհատական պաշտպանության միջոցների ցանկը և այդ միջոցների օգտագործման ոլորտները:
7. Թարգմանել 3-րդ գլխում նշված չթարգմանված հրահանգները և տեղադրել https://www.translation-centre.am/ կայքէջում
8. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում կատարել լրացում՝ ավելացնելով բացառության մեջ հետևյալ բառերը «աշխատողների առողջության պահպանմանը և անվտանգության ապահովմանը»
9. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից մշակել ստուգաթերթեր՝ ըստ ոլորտների
10. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ ըստ ոլորտների՝ մասնագիտացված տեսուչների բավարար քանակ ունենալու համար